

## Արձանագրություն թիվ 10

Մ/թ հունիսի 6-ի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի:

Օրակարգում՝

1. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի շրջանավարտների ատեստավորման արդյունքների ամփոփում:
2. Մագիստրատուրայի ընդունելության հարցը:
3. 2011-2012 ուս. Տարվա առաջին կիսամյակի սոցիալական արդյունքների ամփոփում:
4. Ընթացիկ հարցեր:  
Հաստատվեց օրակարգը:

1. Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց շրջանավարտների ատեստավորման արդյունքները, որոնք դրական էին: Դեկանը ներկայացրեց հանձնաժողովի նախագահների եզրակացությունները և առաջարկները:
2. Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց մագիստրատուրայի ընդունելության հարցը՝ առկա և հեռակա ուսուցման: Ամբիոնի վարիչները հավաստեցին իրենց պատրաստ լինելը:
3. Դեկանը ներկայացրեց սոց. հարցման արդյունքները, որոնք բավականին բարձր էին: Դեկանը ներկայացրեց նաև ուսանողների կողմից արված դիտողությունները և առաջարկները:
4. Ընթացիկ հարցեր՝  
- Քննարկվեց ԵՊՄՀ ռեկտեր Ռ. Միրզախանյանի դիմումը ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյանին առ այն, որ Հ. Հակոբյանը ինքնակամ՝ ընկերոջն օգնելու համար, նրա փոխարեն որոշել է քննություն հանձնել:

Որոշեցին Հ. Հակոբյանին ներկայացնել խիստ նկատողության:

- Քննարկվեց ռեկտորատի առաջարկությունը բակալավրիատում 2 պետական քննության կամ 1 դիպլոմային աշխատանքի և 1 պետական քննության վերաբերյալ:

Որոշեցին պահպանել քննությունների հին ձևը՝ մեկ ավարտական աշխատանք և մեկ պետական քննություն:

- Դեկանը ներկայացրեց ուսումնական աշխատանքների գնահատման նորմերը, որոնք կուղարկվեն ամբիոններ մանրամասն ծանոթանալու համար:

- Երաշխավորվեցին տպագրության Ն. Հարոյանի, Ս. Հովհաննիսյանի և Ի. Ղազարյանի ուսումնական ծրագրերը:

Գիտխորհրդի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Գիտխորհրդի քարտուղար՝ Ս. Սարգսյան